

ARHS-ULWHL

QWLHU E

RWLRP

FREDRIK BACKMAN

BRITT-MARIE

VAR

HÄR

EN ROMAN

ՏՐԵԴՐԻԿ ԲԱԲՄԱՆ

ԲՐԻՏ-ՄԱՌԻՆ  
ԳԱԼԻՍ Է  
ԲԱՂԱԲ

ԿԵՊ

Թարգմանությունը շվեդերենից՝  
Աշխեն Բախչինյանի



ԵՐԵՎԱՆ  
2025

ՀՏԴ 821.113.6-31 Բաքման

ԳՄԴ 84(4Շվեդ)-44

Բ 400

Բաքման Ֆրեդրիկ

Բ 400 Բրիտ-Մարին գալիս է քաղաք: Վեպ / Ֆ. Բաքման.- Եր.: Newmag, 2025.- 348 էջ:

Բրիտ-Մարին նյարդայնանում է խառնաշփոթից: Եթե տեսնի՝ դանակ-պատառաքաղները խառնիխուռն լցված են դարակում, հաստատ սրտի կաթված կստանա, բայց չի դատապարտում մարդկանց անկիրթ, անփույթ կամ կասկածելի վարքը: Նրա «օգնող» խորհուրդները մարդիկ ընկալում են որպես սուր քննադատություն, մինչդեռ չափից ավելի բժախնդիր այս կնոջ ներսում թաքնված է մեկ այլ Բրիտ-Մարի, որն ունի վառ երևակայություն, մեծ երազանքներ ու ջերմ սիրտ: Ամուսնու հետ 40 տարի ապրելուց հետո Բրիտ-Մարին բացահայտում է նրա անհավատարմությունը, հավաքում է ժամպրուկներն ու նոր կյանք սկսում փոքրիկ քաղաքում: Բորգում աշխատանքի է անցնում երիտասարդական կենտրոնում, որը փակվելու վտանգի տակ է: Բրիտ-Մարին հայտնվում է քաղաքի տարօրինակ բնակիչների՝ անհավանական խառնամբոխի ներսում: Նրան շրջապատում են կլասիկ հարբեցողներ, տոհմիկ անբաններ և ինքնուս խաբեբաներ: Եվ ո՛վ զարմանք. նա ստանձնում է անտաղանդ երեխաների ֆուտբոլային թիմը հաղթանակի տանելու բարդ գործը:

Ցավալի ու զվարճալի, քնքուշ ու ոգեշնչող վեպը համայնքային կապերի, մարդկային հարաբերությունների ուժի մասին է: Եվ այս ամենը կատարվում է մի աշխարհում, որը հաճախ կարող է մենության դրդել անպատրաստ մարդուն:

ՀՏԴ 821.113.6-31 Բաքման

ԳՄԴ 84(4Շվեդ)-44

Գլխավոր գործընկեր՝

«ԲՈՒԿԻՆԻՍՏ» ՍՊԸ

books.am

**bookinist**

ISBN 978-9939-967-93-6

Copyright © Fredrik Backman 2014

Published by agreement with Salomonsson Agency

Ֆրեդրիկ Բաքման «Բրիտ-Մարին գալիս է քաղաք» © 2025, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Salomonsson գրական գործակալության հետ կնքած պայմանագրով:

*Նվիրում եմ մայրիկիս: Նա միշտ հետևում էր,  
որ փոքր կուշտ լինեիր, գրադարակումս էլ՝ շատ գրքեր:*

Ֆուտբոլ սիրում են, որովհետև այն բնազդային խաղ է:  
Երբ գնդակը փողոցում գլորվում է, ոտքով հարվածում են:  
Սերը ֆուտբոլի հանդեսը նման է ցանկացած այլ սիրո,  
որովհետև պարզապես չգիտես՝ ինչպես կարելի է չսիրել:

## Բովանդակություն

Գլուխ 1 .....	11
Գլուխ 2 .....	21
Գլուխ 3 .....	30
Գլուխ 4 .....	38
Գլուխ 5 .....	47
Գլուխ 6 .....	56
Գլուխ 7 .....	63
Գլուխ 8 .....	73
Գլուխ 9 .....	80
Գլուխ 10 .....	90
Գլուխ 11 .....	100
Գլուխ 12 .....	108
Գլուխ 13 .....	113
Գլուխ 14 .....	123
Գլուխ 15 .....	135
Գլուխ 16 .....	145
Գլուխ 17 .....	154
Գլուխ 18 .....	162
Գլուխ 19 .....	169
Գլուխ 20 .....	177
Գլուխ 21 .....	187
Գլուխ 22 .....	195
Գլուխ 23 .....	202
Գլուխ 24 .....	210
Գլուխ 25 .....	217
Գլուխ 26 .....	228

Գլուխ 27 .....	238
Գլուխ 28 .....	243
Գլուխ 29 .....	248
Գլուխ 30 .....	261
Գլուխ 31 .....	270
Գլուխ 32 .....	283
Գլուխ 33 .....	292
Գլուխ 34 .....	303
Գլուխ 35 .....	307
Գլուխ 36 .....	313
Գլուխ 37 .....	322
Գլուխ 38 .....	332
Գլուխ 39 .....	343

# 1

Պատառաքաղ, դանակ, գդալ:

Այսպիսի հերթականությամբ:

Բրիտ-Մարին իրականում այն մարդկանցից չէ, որ դատում են ուրիշներին, բոլորովին, սակայն ոչ մի քաղաքակիրթ մարդու մտքով չի անցնի, չէ՞, խոհանոցի դարակում ճաշի սպասքն այլ կերպ դասավորել:

Բրիտ-Մարին չի դատում, չէ՛, ոչ մի դեպքում, բայց մենք, համենայն դեպս, կենդանիներ չենք, չէ՞:

Հունվարյան երկուշաբթի է: Նա նստած է փոքրիկ գրասեղանի առջև, մի փոքրիկ գրասենյակում, Աշխատանքի տեղավորման գործակալությունում: Ճաշի սպասքը, անշուշտ, ոչ մի կապ չունի, բայց դա միշտ ցուցանիշ է, եթե ինչ-որ բան սխալ է: Ճաշի սպասքը պիտի դասավորված լինի սովորականի պես, քանի որ կյանքն էլ սովորականի պես պիտի լինի: Սովորական կյանքն էլ արժանավայել է, երբ խոհանոցը մաքուր է, պատշգամբը կարգի է բերված, և երեխաները խնամված տեսք ունեն: Բայց իրականում գործն ավելի շատ է, քան թվում է: Պատշգամբի դեպքում:

Չնայած սովորական կյանքում մարդը, անշուշտ, նստած չէր լինի Աշխատանքի տեղավորման գործակալությունում:

Այստեղ աշխատող աղջկա մազերը շատ կարճ են, երիտասարդ տղայի պես: Ո՞վ ասաց, թե սխալ է, քա՛վ լիցի: Բրիտ-Մարին նախապաշարմունքներ չունի: Շատ էլ ժամանակակից կտրվածք է, ինչո՞ւ ոչ:

Աղջիկը ցույց է տալիս թուղթն ու ժպտում, ասես ինչ-որ տեղ է շտապում:

— Ընդամենը լրացրու անուն-ազգանունդ, անձնական համարանիշն ու բնակության հասցեն:

Բրիտ-Մարին պիտի գրանցվի: Ասես ինչ-որ հանցագործ լինի: Կարծես եկել է, որ գործակալությունից աշխատանք գողանա:

— Կաթ ու շաքար,- հաջորդ վայրկյանին հարցնում է աղջիկը՝ պլաստիկ բաժակով սուրճ մատուցելով:

Բրիտ-Մարին չի դատում, ամենևին, բայց նման բա՛ն անել: Պլաստիկ բաժակո՛վ: Պատերա՛զմ է, ինչ է: Բրիտ-Մարին ուզում էր հարցնել աղջկան, բայց քանի որ Քենթն ամեն անգամ պնդում է, որ Բրիտ-Մարին «մի քիչ սոցիալիզացվել» է պետք, փոխարենը դիվանագիտորեն ժպտում է ու սպասում, որ գոնե բաժակի հետ տակդիր առաջարկեն:

Քենթը Բրիտ-Մարիի ամուսինն է: Գործարար է: Անասելի, անասելի հաջողակ է: Գերմանիայի հետ գործարքներ է կնքում ու հիանալի սոցիալիզացված է: Աղջիկը միանգամյա օգտագործման կաթի երկու տուփիկ է բերում, այն տեսակի, որ սառնարանում պահելու կարիք չկա: Հետո պլաստիկ գդալներով լիքը պլաստիկ բաժակ է դուրս բերում: Բրիտ-Մարին ավելի սարսափահար տեսք չէր ունենա, եթե փոխարենն օձ լիներ:

— Ոչ կաթ, ոչ շաքար,- տարակուսում է աղջիկը:

Բրիտ-Մարին թափահարում է գլուխն ու ձեռքով թափ տալիս գրասեղանը, ասես վրան լիքն անտեսանելի փշուրներ լինեն: Ամենուր խրճերով թղթեր են դրված, խառնաշփոթ է: Պարզ է, որ աղջիկը հավաքելու ժամանակ չի ունենա, իր աշխատանքային առաջընթացով է տարված, Բրիտ-Մարին հասկանում է:

— Օքե՛յ, միայն բնակության հասցեդ գրիր այստեղ,- ժպտում է աղջիկը՝ հայացքը թղթին:

Բրիտ-Մարին՝ հայացքը ծնկներին, անտեսանելի փշուրներ է թափ տալիս կիսաշրջազգեստից: Արդեն կարոտում է տանը, իր խոհանոցային սպասքի դարակին: Սովորական կյանքին: Կարոտում է Քենթին, որովհետև նա էր միշտ բոլոր թղթերը լրացնում:

Երբ աղջիկն ուզում էր բերանը բացել, Բրիտ-Մարին ընդհատում է նրան:

— Ներեցեք, ինչի՞ վրա կարող եմ բաժակս դնել:

Բրիտ-Մարին այնպիսի առանձնահատուկ հնչերանգով է ասում, ասես ջանք է գործադրում ի մի բերելու իր ամբողջ մեծահոգությունը ձեռքի պլաստիկ գավաթը «բաժակ» անվանելու համար:

— Հը՞, – շվարում է աղջիկը սեղանի մյուս ծայրից, կարծես բաժակները կարելի է դնել ուզածդ տեղը, հեշտ ու հանգիստ:

Բրիտ-Մարին, հնարավորին չափ սոցիալիզացված ժպտում է:

— Մոռացել ես ինձ բաժակի տակդիր տալ: Ես չեմ ուզում քո սեղանին հետք թողնել, հասկանում ես, չէ՞:

Սեղանի հակառակ ծայրի աղջիկը կարծես բոլորովին չի հասկանում տակդիրի իմաստը: Ոչ էլ կարգին սպասքի: Ոչ էլ, դատելով սանրվածքից, հայելու, նկատում է Բրիտ-Մարին:

— Է՛հ, կարևոր չէ, մի տեղ դի՛ր, – անհոգ ասում է աղջիկը՝ գրասեղանի վրա մի ազատ հատված ցույց տալով:

Ասես կյանքում ամեն ինչ շատ հեշտ է: Ասես ոչ մի նշանակություն չունի տակդիր օգտագործելը կամ խոհանոցային դարակում սպասքը դասավորելու հերթականությունը: Աղջիկը գրչով խփում է թղթին՝ «Բնակության հասցե» վանդակի կողքին: Բրիտ-Մարին թվացյալ համբերատար արտաշնչում է, ո՛չ, ամենևին ո՛չ հոգոց հանելով:

— Բայց մենք չենք կարող, չէ՞, բաժակները պարզապես սեղանին դնել: Սեղանին հետքեր կմնան, հասկանում ես, չէ՞:

Աղջիկն ուշադիր զննում է սեղանի մակերեսը, որն այնպիսի տեսք ունի, ասես երեխաները փորձել են վրան կարտոֆիլ ուտել: Եղաններով: Մթության մեջ:

— Է՛հ, կապ չունի, միևնույն է, արդեն մաշված ու քերծված է, – ժպտալով ասում է նա:

Բրիտ-Մարիի ներսում ամեն ինչ տակնուվրա է լինում:

— Ձեր մտքով, իհարկե, չի անցել, որ հենց տակդիրներ չօգտագործելու պատճառով է այս օրն ընկել, – հաստատում է նա:

Նա, անշուշտ, չափազանց հոգատար է: Եվ բոլորովին ո՛չ պասսիվ ագրեսիվ, ինչպես մի անգամ Քենթի երեխաներն էին ասել իր մասին՝ կարծելով, թե ինքը չի լսում: Բրիտ-Մարին իրականում պասսիվ ագրեսիվ չէ: Պարզապես հոգատար է: Լսելով, որ Քենթի երեխաներն իրեն պասսիվ ագրեսիվ են անվանել, նա մի քանի շաբաթ եղածից ավելի հոգատարություն է ցուցաբերում:

Աշխատանքի տեղավորման գործակալության աղջիկը լարված է երևում: Ու ունքերն է տրորում:

— Ինչո՞ւ չէ... այսինքն՝ ո՞նց որ Բրիտ է, չէ՞, անունդ:

— Բրիտ-Մարի: Միայն քույրս էր ինձ Բրիտ ասում, – ուղղում է նրան Բրիտ-Մարին:

— Ընդամենը պահանջվում է... լրացնել թղթերը: Խնդրում եմ:

Բրիտ-Մարին հայացքը հառում է թղթին, որտեղ պահանջվում է նշել, թե ով է ինքը և որտեղ է բնակվում: Նա համոզված է, որ մեր օրերում մարդ համարվելու համար խելքից դուրս թղթեր պիտի լրացնի: Ու անհեթեթության աստիճան թղթաբանություն է պահանջվում, որպեսզի հասարակությունը քեզ ընդունի:

Վերջապես դժկամորեն լրացնում է անունը, անձնական համարանիշն ու բջջայինի համարը: Բնակության հասցեի վանդակը մնում է դատարկ:

— Ի՞նչ կրթություն ունես, Բրիտ-Մարի, – հարցնում է աղջիկը:

Բրիտ-Մարին անուր սեղմում է ձեռքի պայուսակը:

— Թույլ տվեք տեղեկացնել, որ իմ կրթությունը գերազանց է, – տեղեկացնում է նա:

— Իսկ պաշտոնապե՞ս, ինչ-որ կրթություն չունե՞ք, – հարցնում է աղջիկը:

Բրիտ-Մարին կարճ արտաշնչում է: Դա, իհարկե, փնջացնել չէ: Բրիտ-Մարին նրանցից չէ, որ փնջացնում են:

— Թույլ տվեք տեղեկացնել, որ ես անթիվ-անհամար խաչբառեր եմ լուծում: Առանց կրթության մարդը նման բան չի կարող անել, – նեղսրտած տեղեկացնում է նա:

Բրիտ-Մարին մի շատ փոքր կում է անում սուրճից: Քենթի սուրճի համը չունի: Քենթը հրաշալի սուրճ է եփում, բոլորն այդպես էին ասում միշտ: Բրիտ-Մարին տակդիրների պատասխանատուն է, Քենթը՝ սուրճի: Այդպես էին համատեղ ապրում:

— Է՛հ, – ասում է աղջիկն ու քաջալերաբար ժպտում՝ հարցադրումը փոխելով:

— Աշխատանքային փորձ ունե՞ս:

— Վերջին անգամ մատուցող եմ աշխատել: Ես արտակարգ լավ հանձնարարականներ եմ ստացել, – տեղեկացնում է Բրիտ-Մարին:

Աղջիկը մի պահ հույսով է լցվում, որն արագ մարում է:

— Դա ե՛րբ էր,– հարցնում է:

— 1978-ին,– պատասխանում է Բրիտ-Մարին:

— Դե...,– ասում է աղջիկն ու ժպտալու ոչ այնքան հաջող փորձ անում՝ ռեակցիան թաքցնելու համար: Հետո նորից է փորձում,– ու դրանից հետո այլևս չե՛ս աշխատել:

— Դրանից հետո ամեն օր եմ աշխատել, օգնել եմ ամուսնուս իր ձեռնարկության գործերում,– վիրավորված պատասխանում է Բրիտ-Մարին:

Աղջկա հայացքում նորից հույս է արթնանում: Կարծես թե պիտի արդեն վարժված լիներ:

— Իսկ որո՞նք էին քո աշխատանքային պարտականությունները:

— Ես հոգ էի տանում երեխաների մասին ու հետևում, որ մեր տունը պատշաճ տեսք ունենա,– ասում է Բրիտ-Մարին:

Աղջիկը ժպտում է, որ թաքցնի հուսախաբությունը, ինչպես անում են մարդիկ, որ չեն հասկանում «բնակության վայրի» ու «տան» տարբերությունը: Իսկ տարբերությունն իրականում հոգատարությունն է: Այն, որ ձեռքի տակ տակդիրներ լինեն ու իսկական սուրճի բաժակներ, որ ծածկոցներն առավուտյան այնքան հարթ ու ձիգ ծածկեն անկողինները, որ, ինչպես Քենթն էր կատակով ասում ծանոթներին, եթե մարդ սայթաքեր ննջասենյակի դռան շեմին, ոտքը կոտրելու հավանականությունը հատակին ընկնելիս ավելի փոքր կլիներ, քան ծածկոցին ընկնելիս: Բրիտ-Մարին տանել չէր կարողանում, երբ նա այդպես էր ասում: Քաղաքակիրթ մարդիկ ոտքը բարձրացնում են ննջասենյակի դռան շեմից անցնելիս: Շա՛տ մեծ պահանջ է: Դժվա՛ր է մարդ լինելը:

Երբ Բրիտ-Մարին ու Քենթը պիտի ճամփորդելու մեկնեին, Բրիտ-Մարին անկողնու ներքնակին նախքան ծածկոցը փռելը քսան թուփով խմորի փխրեցուցիչ էր ցանում: Փխրեցուցիչի բաղադրիչ սոդան կլանում էր կեղտն ու խոնավությունը, այնպես որ ներքնակը թարմ էր մնում: Սոդան գրեթե ամեն ինչին օգնում է, դրանում սեփական փորձով համոզվել է Բրիտ-Մարին: Քենթը սովորաբար բողոքում է, թե ուշանում են, բայց այդ ժամանակ Բրիտ-Մարին ձեռքերն ագուցում է կոնքերի առջև ու հայտարարում. «Ես պետք է մինչև մեկնելը պարտադիր հավաքեմ անկողինները, Քենթ: Իսկ եթե հանկարծ մահանա՞նք»:

Հենց այդ է պատճառը, որ Բրիտ-Մարին ատում է ամեն տեսակ ճամփորդություն: Մահը: Այդ դեպքում նույնիսկ սոդան չի օգնում: Քենթն